

Letter #1

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԱԿՆԵՆՅՑ ԿՈՒԲԵԼԱԿՆ ԵԿԵՂԵՅԻ  
ՄԵՏԱԳՈՒՅՆ ՊՈՍԹՈՒՄ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS 02138 • TEL: 354-0632

REVEREND FATHER MAMPRE KOUZOUIAN  
(Pastor)

Սիրելի ծխականներ,

Մեծագոյն Պոսթոնի Ս.Երրորդութիւնն Հայց. Եկեղեցիս, իր ծխականներու առա-  
տածեոնութեամբ եւ իր հօտին ու եկեղեցապատկան կազմակերպութեանց համագործակցու-  
թեամբ, շաբաթական նուիրատուութիւններով, քլէժներով, անդամատուրքերով, կիտա-  
նօրեայ պնակներէն եւ եկեղեցւոյ զանազան ձեռնարկներէն կը որոշուի իր զանա-  
որոշ եկամուտ մը:

Երկար խորհրդակցութենէ ետք, Հոգեւոր Հովիւն ու ծխական խորհուրդը կը  
խորհին թէ ժամանակը հասած է այլեւս, նկատի առնելու ``նոր`` միջոցառումներ,  
որոնք արդէն գոյութիւն ունին երկու հազար տարիներէ ի վեր: Ժամանակն է փոփոխ-  
ման ենթարկելու Եկեղեցւոյ տարեկան պիւտճէին համար նիւթական գոյացնելու կերպը:

Թէեւ Եկեղեցին կը պատկանի բոլոր ծխականներուն, ոմանք սակայն, կը ձգտին  
այլոց թողուլ՝ Եկեղեցւոյ գործը եւ Եկեղեցւոյ նիւթական յատկացնելը: Մեր ուրա-  
խութեանց եւ տիրութեանց օրերուն ո՞ր կը դառնանք օգնութեան համար, եւ կամ  
մեր հայեացքը ո՞ր կը դարձնենք երբ նեղութեանց մատնուինք, հոգեկան տազնապնե-  
րու ենթարկուինք: Բնական է Աստուծոյ եւ Եկեղեցւոյ:

Մենք՝ մեր կնանքի ընթացքին, իբրեւ հայեր՝ պէտք ունինք Եկեղեցիին: Եկեղե-  
ցին եւս պէտք ունի իր զաւակներուն, ոչ միայն իբրեւ բնական - մկրտուած - ան-  
դամներ, այլ մանաւանդ՝ իբրեւ գործօն անդամներ: Գործնական իրողութիւն մըն է  
այս. տալը եւս գործնական իրողութիւն մըն է:

Տալու գործնական ընթացքը, անձի մը ժամանակը, աստուածատուր տաղանդը, նիւ-  
թական ստացուածքները հետեւողականօրէն, գործնականօրէն եւ համեմատականօրէն վե-  
րադարձնելն է Աստուծոյ՝ ամենայն բարեաց Տուիչին:

Մեր առաջարկած՝ տալու ``նոր`` ձեւն է Տնտեսութեան - սթիւուրտշիբ - մէթո-  
տը: Ծխականներուն համար, Եկեղեցւոյ նիւթական ապահովելու ամենէն արդար եւ գործ-  
նական միջոցը այս է. այս ձեւով նիւթականի մտահոգութենէն ազատ պիտի կացուցանենք  
եկեղեցապատկան կազմակերպութիւնները, հետապնդելու՝ քրիստոնէական, կրթակառ-մա-  
կուլթային եւ ընկերային իրենց ծառայութիւնը մեր զաղութէն ներս:

Յառաջիկայ շաբաթներու ընթացքին, Եկեղեցւոյս կողմէ պիտի ստանաք նամակսու-  
որոնք մանրամասնօրէն պիտի բացատրեն Տնտեսութեան - Սթիւուրտշիբ - իմաստը եւ  
կարեւորութիւնը: Կը խնդրենք որ ուշադրութեամբ կարդաք զանոնք եւ Տնտեսութեան  
մասին ձեր ունեցած հաւանական հարցումները եւ մտահոգութիւնները պիտի քննենք  
Մասնաւոր ծխական Անդամական Ժողովին որ պիտի գումարուի յառաջիկայ աշնան:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

Յունիս 18, 1980

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄ